

**Հ Ր Ա Մ Ա Ն N 468-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ**

**«31» ՕԳՈՍՏՈՍԻ 2018 Թ.**

**ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ**

«ԵՐԵՎԱՆ» ՆՈՏԱՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՆՈՏԱՐ ՎԵՐԱ ԱԲԱԶՅԱՆԻ  
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ԵՐԵՎԱՆ» ՆՈՏԱՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ  
ՆՈՏԱՐ ՍՈՒՍԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասով և 22-րդ հոդվածի 4-րդ մասով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության նոտարական պալատի նախագահ Վ. Հովսեփյանի 2018 թվականի օգոստոսի 29-ի N ԵՆՊ-627/18 գրությունը և «Երևան» նոտարական տարածքի նոտար Վ. Աբաջյանի դիմումը.

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝**

1. 2018 թվականի սեպտեմբերի 11-23-ը ներառյալ «Երևան» նոտարական տարածքի (նստավայր՝ «Արաբկիր 4») նոտար Վերա Աբաջյանի ժամանակավոր բացակայության ընթացքում նրա կողմից «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-56-րդ և 58-63-րդ հոդվածներով նախատեսված նոտարական գործողություններ կատարելու, ինչպես նաև վավերացված գործարքներում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու կամ դրանք վաղակետ լուծելու լիազորությունները վերապահել «Երևան» նոտարական տարածքի (նստավայր՝ «Արաբկիր 4») նոտար Սուսաննա Դանիելյանին:

**ԱՐՏԱԿ ԶԵՅՆԱԼՅԱՆ**

31.08.2018

X 

Artak Zeynalyan